# ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ

**Ուսումնասիրություն**

*Այս նախագիծն իրականացվում է Հանրային լրագրության ակումբի կողմից՝ «Մեդիա և տեղեկատվական գրագիտություն աքսելերատոր» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհով։*

*Նախագիծն իրականացվում է Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատորի շրջանակում «Առավոտ» օրաթերթի լրագրող Տաթևիկ Հարությունյանի կողմից։ Նախագծում արտահայտված կարծիքներն ու դիրքորոշումները կարող են չհամընկնել ֆինանսավորող կողմի տեսակետի հետ։*

**Հետազոտական թիմ**

**Տաթևիկ Հարությունյան, Գայանե Հովակիմյան**

Երևան-2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվող ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջացել է՝ հաշվի առնելով ծնողական համայնքի և երեխաների շրջանում նկատվող մեդիագրագիտության՝ ընդհանուր առմամբ ցածր մակարդակը և շատ դեպքերում տեղեկացվածության պակասը:

Ուսումնասիրությունն իրականացվել է 132 ծնողի և 138 երեխայի շրջանում՝ ընդհանուր 270 հոգու շրջանում: Այն իրականացվել է Երևանի երկու դպրոցներում՝ Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 և Ալ. Պուշկինի անվան թիվ 8 դպրոցներում:

Հարցման մասնակից **թիրախային խումբ** ընտրվել են ծնողական համայնքի ներկայացուցիչներ (25-35 տարեկանների խումբ, որոնց երեխաները միջին դպրոցի աշակերտներ են), (35-63 տարիքային խումբ, որոնց երեխաները սովորում են ավագ դպրոցում): Երեխաներ (10-12 տարեկան տարիքային խումբ), (13-15 տարեկան տարիքային խումբ):

**Մեթոդաբանություն**

Հարցումն իրականացվել է տպագիր հարցաթերթերի միջոցով, այնուհետը անցկացվել են 8-12 հոգանոց ֆոկուս խմբային քննարկումներ նախ ծնողների, այնուհետև երեխաների հետ:

**Նպատակ և խնդիրներ**

Ուսումնասիրության նպատակն է պարզել ծնողական համայնքի և երեխաների մեդիագրագիտության աստիճանը:

**Խնդիրներն են՝**

▪ պարզել ծնողական համայնքի և երեխաների մեդիագրագիտության կարողությունների մակարդակը,

▪ պարզել, թե որքանով են թիրախային այս խմբերը կարևորում իրենց մեդիագրագիտության կարողությունների զարգացումը:

▪ պարզել, թե ինչպես են թիրախային խմբերի՝ մեդիագրագիտության կարողություններն ազդում համացանցում նրանց գործողությունների և վարքագծի վրա:

## Ծնողների շրջանում հարցման արդյունքներ

Ուսումնասիրությունն իրականացվել է 30-63 տարեկան ծնողների շրջանում 132 ծնողների շրջանում:

Հարցման մասնակիցների 20 %-ը արական սեռի ներկայացուցիչներ են, 80%-ը՝ իգական: Մասնակիցների 5 %-ը մինչև 30 տարիքային խմբում են, 80%-ը 31-45 տարիքային խմբում, 16 %-ը 46-63 տարիքային խմբում: Հարցվածների 79 %-ն ունի բարձրագույն կրթություն, 11%-ը միջին մասնագիտական, 7%-ը՝ հետբուհական:

**Հիմնականում ո՞ր աղբյուրից եք ստանում տեղեկատվություն հարցին**, հարցվածների 69 %-ը պատասխանել է՝ սոցցանցեր, 58%-ը պատասխանել է համացանց և կայքեր, 40%-ը պատասխանել է հեռուստատեսություն, 5 %-ը ռադիո և 4%-ը տպագիր մամուլ:




**Տեղեկատվության ո՞ր աղբյուրն է Ձեզ համար առավել հավաստի** հարցին պատասխանել է 101 հոգի: Հարցի պատասխաններն ակնկալվել են հարցման մասնակիցների կողմից: 22 հոգի պատասխանել է՝ հեռուստատեսություն, 17 հոգի՝ սոցցանցեր, 28 հոգի՝ համացանց, պաշտոնական աղբյուրներ՝ 11 հոգի, տպագիր մամուլ՝ 3, ռադիո՝ 3, ոչ մեկը 10 հոգի:

Հատկանշանակ է, որ լրատվության ոչ մի աղբյուրի չի վստահում մոտավորապես հարցման մասնակից այնքան անձ, ինչքան վստահում է պաշտոնականին: Իսկ ռադիոն և տպագիր մամուլը նկատելիորեն զիջում են համացանցին, սոցցանցերին և

հեռուստատեսությանը: Այս արդյունքները թերևս ազդանշան են նաև, որ մեդիագրագիտության կարողությունների ընդլայնման խնդիր կա ծնողների շրջանում:

Վարքագծային առանձնահատկությունները պարզելու նպատակով հարցաթերթում տեղ են գտել մի քանի հարցեր: Օրինակ՝ հարցին՝ **ի՞նչ եք ձեռնարկում, երբ Ձեր և Ձեր երեխայի էջում** հանդիպում եք սխալ և վնասող բովանդակության, պատասխանները՝ ստորև նկարում:




Նկատենք, որ հարցվածների 3%-ն ընտրել է «ոչինչ չեմ անում» պատասխանը, ինչը նշանակում է, որ այս խմբի մարդիկ կարևորություն չեն տալիս իրենց երեխաների՝ համացանցային անվտանգությանը: Սրա պատճառներից կարող է լինել նաև մեդիագրագիտության ցածր մակարդակը:

Հարցին՝ **համակարգչային վարակներից պաշտպանող ծրագրեր տեղադրե՞լ եք Ձեր և Ձեր երեխայի համակարգչի մեջ,** այո պատասխանել է 71%-ը, ոչ՝ 27 %-ը:




Հարցին՝ **գիտե՞ք՝ ինչ է երկփուլանի վավերականացումը**, հարցվածների 37%-ը պատասխանել է՝ այո, 29%-ը՝ ոչ: **Ակտիվացրե՞լ եք երկփուլանի վավերականացումը**

**google-ում և սոցցանցերի Ձեր և Ձեր երեխաների էջերում**, այս հարցին ոչ պատասխանել է 62%-ը, այո՝ 33%-ը: Ստացվում է, որ հարցվածների մեծամասնությունը, թեև գիտի՝ ինչ է երկփուլանի վավերականացումը, բայց դրա ակտիվացումը չի կարևորում: Սա նշանակում է, որ մեդիագրագիտության պակասը նաև ազդում է ծնողների համացանցային վարքագծի վրա:




Հարցվածների վարքագծային առանձնահատկությունները պարզելու համար կիրառվել է նաև իրավիճակային հարցերի տրման մեթոդը: Օրինակ՝ այսպիսի հարց է տեղ գտել հարցաթերթում. «**Պատկերացրեք՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից էլեկտրոնային փոստով նամակ եք ստացել, ըստ որի որոշում է ընդունվել՝ բոլոր դպրոցահասակ երեխաներին տրամադրել 30.000 ՀՀ դրամ, ինչի համար պետք է նշված էլ փոստին ուղարկել երեխաների ծննդյան վկայականներն ու ծնողների անձնագրի պատճենները: Խնդրում եմ նկարագրել Ձեր գործողությունը»:** Պատասխանները՝ ստորև ներկայացված պատկերում



Հարցվածների 2%-ը պատասխանել է, որ կուղարկի նշված փաստաթղթերը, իսկ 40%-ը կանտեսի նամակը: Այս խմբի մարդիկ թիրախային են, քանի որ հեշտությամբ նրանք կարող են ապակողմնորոշվել, դառնալ մանիպուլյացիայի և ապատեղեկատվության զոհեր, քանի որ չունեն հստակ դիրքորոշում և առավել ևս դրա կայացման համար գիտելիք:

Հարցին՝ **ի՞նչ եք անում, եթե անծանոթ օգտատեր սոցիալական էջում Ձեր տեղադրած հրապարակման ներքո թողնում է մեկնաբանություն**, պատասխանները՝ տես ստորև նկարում.




Այն, որ ընդամենը 1%-ն է արձագանքում, ուրախալի է, սակայն 58%-ն այնուամենայնիվ, տրամադրված է նաև պատասխանել մեկնաբանությանը՝ կախված մեկնաբանության բովանդակությունից, առանց ճշտելու օգտատիրոջ ինքնությունը, այն կեղծ է, թե՝ ոչ:

Հարցին՝ **Ձեր երեխայի համացանցային գործունեությունը վերահսկո՞ւմ եք,** հարցվածների բացարձակ մեծամասնությունը պատասխանել է՝ այո: Նկարը՝ ստորև




## Երեխաների շրջանում կատարված հարցումների արդյունքներ

Հարցմանը մասնակցել է 138 աշակերտ: Մասնակիցների 51%-ը իգական սեռի են, 49%-ը՝ արական: Հարցման մասնակիցների 43%-ը 10-12 տարիքային խմբի երեխաներ են, 55 %-ը՝ 13-15 տարիքային խմբի ներկայացուցիչներ:

**Ինչքա՞ն ժամանակ եք միջինում անցկացնում համացանցում** հարցի պատասխանները ներկայացված են ստորև՝ պատկերում




**Ո՞ր հարթակներից եք ավելի շատ օգտվում** հարցի պատասխանների երևում է, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցն ունի շատ փոքր հետաքրքրություն այս տարիքային խմբերի երեխաների համար, փոխարենն առաջատարներից են Յութուբն ու Ինստագրամը՝ Տիկտոկը զիջում է այս երկու սոցիալական ցանցերին, իսկ Գուգլ/ Յանդեքս/ այլ

որոնողական համակարգերը երեխաների շրջանում տարածվածության առումով զիջում են ՏիկՏոկին: Մանրամասն՝ ստորև




Հարցին՝ **ի՞նչ վտանգների եք առնչվել համացանցում**, մեծամասնությունը պատասխանել է՝ կախվածություն, այնուհետև ապատեղեկատվություն: Սա նշանակում է, որ կարևոր է նաև հոգեբանի աշխատանքը այս տարիքային խմբի երեխաների հետ, քանի որ նրանց մեծամասնությունը համացանցից կախվածություն ունի, ինչը ըստ էության նրանց համար մտահոգիչ է, քանի որ հարցմանը մասնակցելիս փաստորեն չեն թաքցրել այդ հանգամանքը, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մանրամասնել են, որ հաճախ չեն կարողանում կենտրոնանալ այլ աշխատանքի վրա՝ օրինական տնային հանձնարարությունների վրա, քանի որ անընդհատ ուշադրություն է գրավում համացանցը, այնտեղի նամակագրությունը, խաղերը: Մանրամասն՝ ստորև.




Հարցին՝ **համացանցում վտանգի առնչվելու դեպքում ու՞մ եք դիմում**, հարցված երեխաների մեծամասնությունը պատասխանել է՝ ընտանիքի անդամներին: Երկրորդ

տեղում Գուգլ կամ այլ որոնողական համակարգերն են, ընդամենը 4%-ն է պատասխանել մեդիագրագիտության ոլորտի էջին: Մի կողմից այն, որ վտանգի առնչվելու դեպքում երեխաները նախընտրում են այն լուծել ընտանիքի շրջանակում, սա վկայում է ընտանիքի հետ կապվածության և ընտանիքի հանդեպ վստահության բարձր մակարդակի մասին, մյուս կողմից այն, որ մեդիագրագիտության ոլորտի մասնագետներին շատ քիչ տոկոսն է ցանկանում դիմել, վկայում է այն մասին, որ ըստ էության՝ մեդիագրագիտության կարևորությունը չի գիտակցվում, վստահություն չկա այս ոլորտի մասնագետի հանդեպ կամ գուցե չկա այն համոզմունքը, որ հնարավոր է՝ այս ոլորտի մասնագետն օգնի իրենց:




Հարցին՝ **գիտե՞ք մեդիագրագիտության մասին տեղեկություն ապահովող որևէ աղբյուր**, մեծամասնությունը պատասխանել է՝ ոչ: Սա խիստ մտահոգիչ ցուցանիշ է և թերևս այս ուղղությամբ պետք է իրազեկման աշխատանք տանել՝ տեղեկացվածության բարձրացման առումով, ինչպես նաև երեխաների շրջանում մեդիագրագիտության կարևորության մասին արշավի իրականացման առումով:



Հարցին՝ **երբևէ մասնակցե՞լ եք մեդիագրագիտության վերաբերյալ դասընթացի**, մեծամասնությունը պատասխանել է՝ ոչ: Սա ևս մտահոգիչ ցուցանիշ է: Առավել մտահոգիչ է այն, որ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ պարզվեց, որ երեխաների մեծամասնությունը չի էլ ցանկանում մասնակցել մեդիագրագիտության դասընթացի՝ պատճառաբանելով, որ այդ ոլորտում իրենց հուզող խնդիրների մասին տեղեկություններ կարող են ստանալ նաև համացանցից, մի մասն էլ՝ որպես պատճառ նշեց ժամանակի սղությունը:

## Մեդիագրագիտության կարևորությունը՝ ըստ ծնողների և երեխաների

Երեխաների և ծնողների վերաբերմունքը մեդիագրագիտությանը, դրա կարևորության աստիճանը պարզելու համար միանման հարցեր են տրվել ծնողներին և երեխաներին՝ պարզելու նրանց վերաբերմունքը:

Ծնողներին տրվել է հետևյալ հարցը. **«Որքանո՞վ է կարևոր Ձեր և Ձեր երեխայի՝ մեդիագրագետ լինելը»**: Պատասխանները՝ ստորև.



Պատասխաններից երևում է, որ հարցման բոլոր մասնակիցները կարևորում են մեդիագրագիտությունը: Նրանց 73 %-ը լիովին դրական է տրամադրված մեդիագրագիտության կարևորության նկատմամբ, 29-ը տոկոսը՝ մասամբ:

Հարցին՝ **որքանո՞վ է կարևոր ուսումնական հաստատություններում մեդիագրագիտության առարկայի ներմուծումը**, շատ կարևոր է պատասխանել է հարցվածների 25%-ը: Կան անձինք, որոնք ընդհանրապես չեն կարևորում մեդիագրագիտություն առարկայի ներմուծումը՝ որպես առարկա: Սա իհարկե, միանշանակ բացասական չի կարելի համարել, որովհետև այս դիրքորոշման պատճառներից կարող է լինել նաև այն, որ դպրոցական ծրագիրն առանց այն էլ ծանրաբեռնված է և ըստ ծնողների՝ լրացուցիչ առարկայի ներմուծումը կարող է էլ ավելի բարդացնել իրավիճակը: Սակայն մեր կարծիքով՝ մեդիագրագիտությունն այլ առարկաներում ինտեգրելը վաղուց անհրաժեշտություն է:




Հարցին՝ **եթե տեղեկանաք, որ կազմակերպվում է մեդիագրագիտության դասընթաց անվճար հիմունքներով, ապա կցանկանա՞ք մասնակցել**, երեխաների 37%-ն է դրական պատասխան տվել, ծնողների՝ 49%, երեխաների 22%-ը չի մասնակցի մեդիագրագիտության անվճար դասընթացի, իսկ ծնողների՝ 14%-ը: Երեխաների 41 %-ը չգիտի՝ կմասնակցի՞, թե՝ ոչ, ինչը գերազանցում է մյուս երկու պատասխանները:

Պատկերը մտահոգիչ է թերևս այն պատճառով, որ հարցմանը մասնակցած երեխաների մեծամասնությունը չի մասնակցել մեդիագրագիտության դասի, բայց նաև չի

էլ ցանկանում մասնակցել: Սակայն կարծում ենք՝ 41%-ը, որը չգիտի՝ կմասնակցի, թե՝ ոչ, կարող է դառնալ մեդիագրագիտությունը կարևորող և մեդիագրագիտության դասընթացների պոտենցյալ մասնակից, եթե նրանց հետ ճիշտ ու արդյունավետ աշխատանք տարվի: Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ երեխաները պատճառաբանում էին, որ չեն ցանկանում մասնակցել ժամանակի սղության պատճառով, նաև հիմնավորում, որ կարող են այդ գիտելիքները ստանալ նաև համացանցից: Ծնողների մեծամասնությունը ևս ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հայտնեց, որ ինքը չի ցանկանում մասնակցել նման դասընթացների, քանի որ դա ավելի անհրաժեշտ է երեխաների համար, ուստի լավ կլինի, որ նրանց համար կազմակերպվի:

Ծնողների 70%-ը կարծում է, որ **եթե անվճար մեդիագրագիտության դաս լինի**, իր երեխան կմասնակցի, միայն 5%-ն է բացասական պատասխան տվել: Ստորև կարող եք տեսնել պատկերը.




Հարցին՝ **ո՞ր թեմաների վերաբերյալ կցանկանայիք մեդիագրագիտության դասընթաց լիներ**, երեխաների՝ իրենց նախընտրության մասին պատասխանները և ծնողների կարծիքով՝ երեխաների համար կարևոր թեմաների մասին պատասխանները ներկայացված են ստորև՝ պատկերում.







Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ ամենաշատը և՛ ծնողների, և՛ երեխաների համար կարևոր է օնլայն և վիդեո խաղերի, սոցցանցերի վտանգների և դրանցից խուսափելու թեմատիկան: Երկրորդ հորիզոնականում է՝ համացանցը՝ հնարավորության աղբյուր թեման: Տեղեկատվության ստուգումն էլ երրորդ հորիզոնականում է: Սա ցույց է տալիս նաև այն նախասիրությունները, որոնք ունեն երեխաները և ծնողների կարծիքով՝ իրենց երեխաները համացանցային վարքագծի դրսևորման ժամանակ:

## Ծնողներ-երեխաներ. վարքագծի համեմատական վերլուծություն

Հարցին՝ **անվտանգության ի՞նչ միջոցներ եք կիրառում համացանցից օգտվելիս**, կարդում եմ ընդհանուր դրույթներն ու պայմանները պատասխանել է երեխաների 30 %-ը, ծնողների՝ 37%-ը: Երեխաների 25%-ն է կիրառում հակավիրուսային ծրագրեր, ծնողների՝ 40%-ը, երեխաների 15%-ն է ակտիվացրել երկփուլանի վավերականացումը, ծնողների՝ 23%-ը: Երեխաների 39%-ն է օգտագործում տարբեր ծածկագրեր տարբեր կայքերի համար, ծնողների՝ 33%-ը: Նկատենք, որ հիմնականում երեխաների և ծնողների պատասխանները մոտ են, նմանատիպ համացանցային անվտանգության վարքագիծ են դրսևորում, միայն հակավիրուսային ծրագրերի օգտագործման դեպքում է տարբերությունը մեծ. երեխաները մոտավորապես երկու անգամ ավելի քիչ են օգտագործում հակավիրուսային ծրագրեր, քան ծնողները: Պատկերը՝ ստորև.

Հարցին՝ **ինչպե՞ս եք ստուգում համացանցից ստացված տեղեկատվության հավաստիությունը**, հետազոտում եմ տեղեկատվությունը տրամադրող աղբյուրը պատասխանել է երեխաների 28%-ը, ծնողների 43%-ը, նույն տեղեկատվությունը փնտրում է իրեն ծանոթ այլ էջում կամ կայքում երեխաների 40%-ը, ծնողների՝ 29%-ը, երեխաների 22%-ն է նայում մեկնաբանություններին, ծնողների՝ 19%-ը, նույն տեղեկատվությունը փնտրում եմ համացանցում՝ այլ աղբյուրներ փնտրելով երեխաների 30%-ն է պատասխանել, ծնողների՝ 44%-ը, երեխաների 23%-ը չի ստուգում տեղեկատվությունը, ծնողների՝ 16%-ը: Բավականին մեծ տոկոս է կազմում տեղեկատվությունը չստուգողների թիվը թե՛ երեխաների, թե՛ ծնողների շրջանում: Սա վկայում է այն մասին, որ մեդիագրագիտության պակաս, այնուամենայնիվ, նկատելի է թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների շրջանում:



Ծնողներին հարց է հղվել՝ **եթե էլեկտրոնային հասցեին կամ սոցիալական ցանցերում էջերի հետ կապված խնդիրներ են առաջանում**, ի՞նչ եք ձեռնարկում, նրանց, 55%-ը պատասխանել է՝ աշխատում եմ խնդիրը հասկանալ և լուծել: Երեխաների 33%-ն է այս նույն պատասխանը տվել իրեն ուղղված հարցին՝ եթե թվային միջավայրում խնդիր կամ հարց է առաջանում, ի՞նչ եք ձեռնարկում: Երեխայի օգնությանն է դիմում ծնողների 19%-ը, մասնագետի օգնությանը՝ ծնողների 24%-ը, ընտանիքի այլ անդամի է դիմում ծնողների 16%-ը: Երեխաների 47%-ը դիմում է ընտանիքի այլ անդամի, 11%-ը՝ մասնագետի, 17%-ը համացանցին: Նման իրավիճակներում ոչինչ չի անում ծնողների 9%-ը, երեխաների՝ 11%-ը: Այս հարցի պատասխանները ցույց են տալիս, որ երեխաները թվային միջավայրում անվտանգության հետ կապված խնդիրների հարցով ավելի շատ վստահում են ընտանիքի անդամներին, քան մասնագետին: Պատկերը կարող եք տեսնել ստորև.






## Առաջարկներ

1. Ավելի մեծ ուշադրություն դարձնել մեդիագրագիտության թեմայով իրազեկման արշավներին։

2. Ծնողական համայնքի հետ իրազեկման աշխատանքներ տանել՝ հասնալով նրանց շրջանում մեդիագրագիտությունը կարևորելու ավելի բարձր աստիճանի։

3. Համագործակցել կրթական հաստատությունների հետ, տարածել մեդիագրագիտության վերաբերյալ կրթական նյութեր, մեդիա և թվային անվտանգության մասին տեղեկատվություն ստանալու վերաբերյալ աղբյուրների մասին տեղեկատվություն։

4. Երեխաների շրջանում և ծնողական համայնքի մոտ բարձրացնել մեդիագրագիտության ոլորտի փորձագետների, մասնագետների նկատմամբ վստահությունը։

5. Մեդիագրագիտության կարողությունների ընդլայնման միջոցով խթանել երեխաների և ծնողների՝ ավելի գրագետ համացանցային վարքագծին։